

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ
JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 21

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2022

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)

Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր

Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ

Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր

Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր

Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ

Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ

Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր

Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.

Տեր-Սաթևոսյան Վահրամ պ.գ.դ.

Րեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)

Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)

Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)

Իլյա Յակուբովիչ բ.գ.դ., պրոֆեսոր (Գերմանիա)

Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Գոռ Գևորգյան

ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ
ՆԿԱՏԱՍԱՐ. ԱԲԴԵԼ ՖԱԹԹԱՀ ԱԼ-ՍԻՍԻԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ (2013-2019).....7-17

Արամ Գասպարյան

ԱԼԺԻՐԻ ԲԵՐԲԵՐՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ
ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՇԱՐԺՈՒՄԸ (1962-1999 թթ.).....18-30

Տարթևիկ Մկրտչյան, Միքայել Հովհաննիսյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՐԱԲԱԼԵԶՈՒ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ԿԱՅՔԵՐՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ
(2016, 2020 թթ.). ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ.....31-49

Արմինե Հակոբյան

ԱՐՈՒ ԲԱԿՐ ԱՍ-ՍՈՒԼԻԻ «ԱԽԲԱՐ ԱԼ-ՇՈՒԱՐԱ»
ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՍՊՈԶԻՑԻԱՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ
ԿՈՆՑԵՊՏԸ.....50-65

Մոհամմեդ Հաջ Իբրահիմ

ԱՇԽԱՋՐԱԾՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....66-78

Խադիջե Ահմադ Մեհրաբի

ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ
ՂՈՒՐԱՆԻ ՏԵՔՍՈՒՄ.....79-86

Իրանագիտություն

Անուշ Ստամբոլյան

ԻՄԱՍ ԽՈՍԵՅՆՈՒ «ՎԵԼԱՅԱԹ-Ե ՖԱԴԻՀ»
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿՐՈՆԱԿԱՆ,
ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....87-97

Ալեն Հայրասյետյանց

ՆՈՐԱԳՅՈՒՏ DNF ԱՐՋԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ
ԲԱՅԱԶԵՎԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ՝ «ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ»,
ԹԵ՛ ԽՈՐՀՈՒՐԴ.....98-110

Նունիկ Դարբինյան

ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՄՈՒԹՅԱՆ ՄԵՁ ԵՎ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ
ՀԱՆԴԻՊՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԱՐԱՐԱԾՆԵՐԻ ՇՈՒՐՁ.....111-133

Տիգրան Չանդոյան

ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԹՆՈԿ-
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԹՈՒՐԹԻԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ.....134-144

Թյուրքագիտություն

Կուրադայ Ուրազանևա, Վերունիկյա Ռազունովսկայա, Ալեքսանդր Մաֆայրյան
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄՇԱԿՈՒ-
ԹԱՅԻՆ ՏՐԱՆՍՄԻՍԻԱՅԻ ՁԵՎ: ՂԱԶԱԽԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒ-
ԹՅԱՆ՝ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ145-166

Արշակ Գևորգյան

ՍՏՎԵՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՔՐԻԴԱՅԻՆ ՑԱՆՑԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ.
ԹՈՒՐԹԱԿԱՆ ԽՈՐՔԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ.....167-186

Մարգարիտա Կրտիկաշյան

ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՉՑԱՆԻ ԴԵՐԸ ԹՈՒՐԹԱԿԱՆ
ԵՐԱՄՇՏԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ.....187-200

*Սամվել Ռամազյան **

ԵՎՐՈՊԱՅՈՒԲ (ՖՐԱՆԿԻ) ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ
ԹՅՈՒՐԹԱԿԱՆ ԷՊՈՍՆԵՐՈՒՄ.....201-223

Անի Ոսկանյան

ԱԴԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆ ԳԱՎԱՌԱԿԻ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ.....224-238

Ռուսլան Յականյան

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ (ԳԵՐԵՐԿԱՐ, ԵՐԿԱՐ, ՄԻՋԻՆ,
ԿԱՐՃ ԵՎ ԳԵՐԿԱՐՃ ԹՎԱԳՐՈՒՄՆԵՐ).....239-247

Հովհաննես Խորիկյան

ԿԱՊԱՐՈՎԿԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ
ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ.....248-261

CONTENT

Arabic Studies

Gor Gevorgyan

EGYPT'S POSITION ON THE SYRIAN CRISIS: DURING THE
PRESIDENCY OF ABDEL FATTAH AL-SISI.....7-17

Aram Gasparyan

ALGERIAN BERBERS MOVEMENT FOR THE PRESERVATION OF
NATIONAL IDENTITY (1962-1999).....18-30

Tatevik Mkrtchyan, Mikayel Hovhannisyan

COVERAGE OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT IN
ARABIC-LANGUAGE MEDIA DURING BOTH WAR
PERIODS (2016, 2020): DISCOURSE ANALYSIS.....31-49

Armine Hakobyan

COMPOSITION AND AUTHOR FUNCTION OF ABU BAKR
AS-SULI'S "AKHBAR AL-SHU'ARA".....50-65

Mohammed Haj Ibrahim

THE ROLE OF HYDROCARBON RESOURCES IN
THE CONTEXT OF THE SYRIAN CONFLICT.....66-78

Khadije Ahmad Mehrabi

THE PROBLEM OF ALTERNATION OF PARTICLES
IN THE TEXT OF THE QUR'AN.....79-86

Iranian Studies

Anush Stamboltsyan

THE RELIGIOUS, HISTORICAL AND POLITICAL
PRINCIPLES OF IMAM KHOMEINI'S "VELAYAT-E FAQIH"
DOCTRINE.....87-97

Alen Hayrapetyanc

THE INTERPRETATION OF THE "MYSTERIOUS" VERB FORM OF
THE RECENTLY DISCOVERED DNF INSCRIPTION:
"BLESSING OR ADVICE?".....98-110

Noonik Darbinian
SOME CREATURES FOUND IN IRANIAN FAIRY
TALES AND FOLKLORE..... 111-133

Tigran Candoyan
ETHNO-GEOGRAPHIC BOUNDARIES OF KURDISH
NATIONALISM IN THE TERRITORY OF
THE REPUBLIC OF TURKEY..... 134-144

TurkicStudies

Urazaeva K.B., Razumovskaya V.A., Safaryan A.V
LITERARY TRANSLATION AS A TYPE OF CULTURAL
TRANSMISSION IN SOCIAL TRANSFORMATIONS
CONTEXT. ABOUT KAZAKH LITERATURE
TRANSLATIONS INTO ARMENIAN..... 145-166

Arshak Gevorgyan
THE PARAPOLITICAL PERCEPTION OF THE HYBRID
NETWORK STRUCTURES OF SHADOW GOVERNANCE:
THE TURKISH DEEP STATE..... 167-186

Margarita Krtikashyan
THE ROLE OF TIGRAN CHUKHAJIAN IN
THE TURKISH MUSIC SCENE..... 187-200

Samvel Ramazyan
THE PERSONAGE OF EUROPEAN (FRANK)
IN ARMENIAN AND TURKIC EPICS..... 201-223

Ani Voskanyan
ABOUT THE PECULIARITIES OF ECONOMIC LIFE IN
THE CHORK-MARZPAN SUB-DISTRICT,
ADANA PROVINCE..... 224-238

Ruslan Tsakanyan
CHRONOLOGICAL PROBLEMS OF ASSYRIAN HISTORY
(EXTRA-LONG, LONG, MIDDLE, LOW,
ULTRA-LOW DATES)..... 239-247

Hovhannes Khorikyan
THE TERRITORY AND BOUNDARIES OF CAPPADOCIA
IN ACHAEMENID PERSIA..... 248-261

**ԱԴԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆ ԳԱՎԱՌԱԿԻ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

Բանալի բառեր՝ Կիլիկիա, Ադանայի նահանգ, Օսմանյան կայսրություն, Չորք-Մարզպան, նարնջագործություն, ներքին և արտաքին շուկա, տնտեսության ոչնչացում

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Չորք-Մարզպանը Օսմանյան կայսրության Ադանայի նահանգի Ջեբել-Բերեքեթ գավառի գավառակներից էր: Այն իր շրջակա գյուղերով գտնվում էր Ալեքսանդրետի (Հայոց) ծոցի դիմաց, Բայաս և Այաս հին ավերակ բերդաքաղաքների մեջտեղում, Ամանոսի լեռների ստորոտին, Միջերկրականի ափերից մի քանի կիլոմետր հեռավորության վրա: Այս բոլորի կենտրոնում Չորք-Մարզպան քաղաքն էր՝ ընդարձակ նարնջենիների պարտեզ-անտառներով, որոնք նրան տալիս էին առանձնակի առավելություն²:

Չորք-Մարզպանը բանուկ արևելյան քաղաք էր՝ զարգացած արհեստներով, առևտրով և գյուղատնտեսությամբ: Շուկան կենտրոնացած էր քաղաքի ներքևի հատվածում՝ խաչաձև չորս ճանապարհների վրա, որով. «քաղաքին Տեօթ-Եոլ անունը տրուած է... Բազմաթիւ զարդարուած խանութները շտեմարան մըն էին եւրոպական եւ արեւելեան արտադրութիւններու»³: Չորք-Մարզպանի շուկան մարդաշատ էր դառնում շաբաթ օրերին, և հատկապէս նարնջի վաճառքի շրջանում, երբ շրջակա գյուղերի

¹ ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կրտսեր գիտաշխատող: ani.h.voskanyan@ysu.am

² Խապրիկ Մ., Եթէ Չորք-Մարզպանը ինձի հետ խօսէր..., Պէրյուք, տպ. Կ. Տօնիկեան, 1983, էջ 14-15:

³ Նույն տեղում, էջ 16:

բնակիչները գալիս էին առևտրի: Աշխատակիցները ստանալով իրենց շաբաթական աշխատավարձը. «կը խուժեին դեպի շուկայ, իրենց ընտանեկան պետքերը գոհացնելու համար»⁴: Ընդհանրապես, Չորք-Մարգվանի շուկան Ադանայի նահանգում երկրորդն էր: Շուկայի Քյոթոլլույան, Շյուքրի և Բարձումյան վաճառատներն՝ իրենց կերպասեղենով, կարող էին մրցել կուսակալանիստ Ադանայի հետ⁵:

Չորքմարգվանցիների տնտեսության մեջ նարնջի գերակա դերը ներկայացված է բազմաթիվ աշխատությունների, տեղեկատուների և հուշագրությունների մեջ: Ժամանակի մամուլը պարբերաբար անդրադառնում էր քաղաքի և շրջակա բնակավայրերի նարնջի բերքի քանակությանը, արտահանման ծավալներին, արժեքի փոփոխությանը, ինչպես նաև տեղացիների կյանքում նարնջի մշակման ունեցած առանձնակի նշանակությանը. «Արդարեւ չէի տեսած կեանքիս մեջ երկիր մը, ուր նարնջենին ծաղկեր եւ անոր ոսկեգոյն պտուղը հասուննար ոստերու վրայ... Ծառեր, նարինջի ծառեր անվերջ՝ Չօք-Մարգուանի մէջն ու դուրսը, իստացած նոյն իսկ անոր շուրջի պատերուն վրայ, անտեսանելի պահելով զայն ամէն ակնարկէ, և - ինչպէս գիտենք - ամէն ալ վտանգէ»⁶: Այսպիսին էր 1909 թ. Ադանայի կոտորածներից հետո Չորք-Մարգվան եկած Արշակունիի Թեոդիկի արձագանքը նարնջի այս երկրին, և թերևս ոգևորությունն ավելի մեծ կլինէր, եթէ չլինէին կոտորածի ծանր պատկերները, հետևանքներն ու կորուստները: Հարկավոր է նշել, որ ջարդերի ընթացքում տները կողոպտելուց և հրկիզելուց հետո ոճրագործները սկսում են կտրել նաև Էռզերլի և Օջաքըլ գյուղերի նարնջենիները⁷:

⁴ Նույն տեղում, էջ 16-17:

⁵ Նույն տեղում, էջ 17:

⁶ Թեոդիկ Ա., Ամիս մը՝ի Կիլիկիա, Կ. Պոլիս, տպ. Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, 1910, էջ 163, 166:

⁷ «Գործ», Թիֆլիս, 1909, թիւ 106, 22 Մայիսի, էջ 1:

«Ժամանակ» օրաթերթը նշում էր, որ հատկապես 1909 թ. կոտորածներից հետո, չորք-մարզպանցիներն ամբողջությամբ սկսում են զբաղվել նարնջագործությամբ՝ թողնելով հողագործական մյուս բոլոր աշխատանքները⁸, ինչը կարելի է բացատրել նաև նարնջագործության եկամտաբերության շնորհիվ ջարդի կորուստներն առավել արագ վերականգնելու հույսով:

Նարնջագործությունը բնակչության 75 տոկոսի ապրուստի միջոցն էր: Չորք-Մարզպանի և շրջակա երկու գյուղի (Էոզերլի, Օջաքը) տարեկան արտահանման ծավալները հասնում էին 30-40.000 ոսկու⁹: Շնորհիվ նարնջի վաճառքի, Չորք-Մարզպանը Կիլիկիայում գրավում էր երկրորդ տեղը՝ առևտրի և արտահանման գործում, զիջելով միայն Ադանային, երրորդ տեղում էին՝ Այնթապ և Մարաշ քաղաքները¹⁰: Չորք-Մարզպանն ուներ ևս մեկ առավելություն. այն հանդիսանում էր աշխատաշուկա, որտեղ աշխատանք գտնելու հնարավորություն ունեին լեռնային և դաշտային Կիլիկիայի հայկական քաղաքներից (Ջեյթուն, Հաճըն, Մարաշ, Հասանբեյլի և այլն) բազմաթիվ աշխատավորներ¹¹:

Չորք-Մարզպանի նարնջագործության վերաբերյալ կարևոր մանրամասներ է հաղորդում Մինաս Խապրիկի «Եթէ Չորք-Մարզպանը ինձի հետ խօսեր...» հուշագրությունը՝ նշելով որ Կիլիկիայում Չորք-Մարզպանից, Օսմանիեից, Էրզինից և շրջակայքից բացի, այլ վայրերում հնարավոր չէր նարինջ մշակել: Ամանոսի լեռների ստորոտին կլիմայական պայմանները բավականին նպաստավոր էին այդ պտղատու ծառի արագ աճի համար¹²: 19-րդ դարի վերջին նարնջի և կիտրոնի լայնատարած

⁸ Կիլիկեան արձագանք, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, թիւ 1651, Դեկտեմբեր 5-18, էջ 1:

⁹ Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, 1910 սեպտ. 11-1912 սեպտ. 11, Յաւերուսած Տեղեկագիր քննիչ-պատուիրակ Պ. Ժագ Սայապալեանի, Դալաթիա, «Շանթ», էջ 58:

¹⁰ Խապրիկ Մ., նշվ. աշխ., էջ 23-24:

¹¹ Նույն տեղում, էջ 24 :

¹² Նույն տեղում, էջ 12:

այգիներով առանձնանում էր նաև Այասը¹³, իսկ Բայասում նարնջի ու կիտրոնի ծառաստաններից ու շերամաբուծությունից, ինչպես նաև վաղուց հայտնի բրնձի արտերից բավականին հասույթ էին ստանում¹⁴:

Գ. Եափուճյանը իր «Գեորգ Եափուճեանի գիրքը»¹⁵ ինքնակենսագրական հուշագրությունում գրում է, որ Չորք-Մարզպանում հողագործության և անասնապահության հետ մեկտեղ զարգանում էր արհեստագործությունը, կային կոշկակարներ, ջուլիակներ, դարբիններ, պայտարարներ, պատշարներ, հյուսներ և այլն: Պարտեզներում, նախապես տնկում էին թզի, խաղողի, թթի, ընկույզի և այլ պտղատու ծառեր: Այնուհետև տեղացիները, տեսնելով շերամաբուծության եկամտաբերությունը, զարգացնում են այն¹⁶: Սակայն հետագայում բնակլիմայական պայամաններով և ծովափնյա աշխարհագրական դիրքով պայմանավորված նարնջագործությունը դառնում է հիմնական ապրուստի միջոց: Գ. Եափուճյանի հուշագրության «Նարանջագործութիւնը Տէօրթ-Եօլի մէջ» գլխում ոչ միայն համակողմանի ներկայացվում է Չորք-Մարզպանի նարնջագործության շատ մանրամասներ, այլև լուրջ տեղեկություններ է հաղորդվում տնտեսական պատմության հետազոտությանը զբաղվողներին:

¹³ Այասի նարնջի և կիտրոնի ծառերի մասին հիշատակում է նաև Էփրիկյանը: Էփրիկյան Հ. Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, Ս. Ղազար, 1902, էջ 135:

¹⁴ Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, Պետերբուրգ, տպ. Ի. Լիբերմանի, 1894, էջ 209, 221:

¹⁵ Գևորգ Մարզպի Եափուճյանը ծնվել է 1894 թ. Չորք-Մարզպան քաղաքում, 1915 թ. ընտանիքի հետ ենթարկվել է բռնագաղթի: «Գեորգ Եափուճեանի գիրքը» Գ. Եափուճյանի ու նրա ընտանիքի պատմությունն է: Հեղինակը հուշագրությունը բաժանել է գլուխների, գրել է ներածական: Ձեռագիրը 240 էջ է, գրվել է Երևանում 1960-ական թթ.: Պահվում է «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի ֆոնդերում: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, (այսուհետև՝ ՅՑԹԻ), Գեորգ Եափուճեան, Հուշեր, բաժին 8, թպ 45, ֆի 58:

¹⁶ ՅՑԹԻ, Եափուճեան Գ., նշվ աշխ., էջ 181:

Ինչպես նշում է հեղինակը «մոտաւորապէս 1820 թուականներին» ըստ իր լսածի Քուչուք Մարգիսը Կիպրոսից բերում է նարնջի սերմը. «և ցանուելով, շատ պարտեզներու մէջ կը տնկուի, նարինջի, թուրունճի, թթու և անուշ լիմոնի և եուսուֆիի տունկերը, որպէս ուտելու պտուղ»¹⁷: Նարնջի տնկիները տարածվում են մոտակա գյուղերում, սակայն, ոչ բոլոր վայրերում է բարձր բերքատվություն լինում. «միայն Էօզերլի գյուղի, Հայերուն պարտեզները կուտային, Տօրթ-Եօլի նարինջներու որակին հաւասար բերք»¹⁸:

Չորք-Մարգպանի նարնջի բերքահավաքի, փաթեթավորման և տեղափոխման աշխատանքներում ներգրավված աշխատողների քանակն ու աշխատանքի բնույթը, համակողմանի նկարագրված է նաև չորքմարգպանցի Սամվել Պոռանյանի «Հուշագրություն Ճուկ-Մարգեպանի»¹⁹ 505 մեքենագիր էջից բաղկացած անտիպ աշխատության մէջ: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ ներկայացված հուշագրություններում, ինչպես նաև տարբեր աշխատություններում առկա տվյալները գրեթէ նույնությամբ համընկնում են:

Գ. Եափուճյանը նշում է, որ առաջին վաճառականները գյուղունիացի հույներն էին, որոնք իրենց աշխատանքները սկսեցին 1897 թ-ին: Առաջին տարիներին հավաճաները (քրիստոնյա վաճառականներ) իրենց հետ բերում էին նարնջագործության հմուտ վարպետներ, սակայն շուտով չորք-մարգպանցիները սկսում

¹⁷ Նույն տեղում, էջ 182:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Հուշագրությունը գրվել է հայատառ թուրքերեն՝ Սամվել Պոռանյանի կողմից, ով եղել է Չորք-Մարգպանի երեք հերոսամարտերի մասնակից, Սիսվան որբանոցի շինություններից մեկի հատակագծի հեղինակը: Հուշագրությունը պահվում է Վերա Մահակյանի մոտ: Պոռանեան Ս., Հուշագրություն Ճուկ Մարգպանի, Լենինական, անտիպ, 1965:

են տիրապետել գործի նրբություններին և բոլոր աշխատանքները կենտրոնացնում են իրենց ձեռքում²⁰:

Քաղաքում մթերանոց-աշխատանոցներ են հիմնադրում ինչպես տեղացիները, այնպես էլ դրսից եկած վաճառականները: Եաֆացի Միխայիլ Միշեգի գործընկերն էր Քյուչուք Սարգիսյան Հաճը Հակոբը, Գոռդե Էմանուելի՝ Հակոբ Մեմերձյանը, Հավաճա Վանկելի՝ Հաճի Կարապետ Էյիրոսյանը, Հավաճա Նիկոլայ Խուրիի գործընկերն էր՝ Գըլըձյանը, Հավաճա Մըշարիի (կամ Նըչարի)՝ Իսկենտեր Նաճարյանը, Գլեանթի (կամ Պլեանթի) գործընկերը՝ Սարգիս Եափըձյանը, Պայրաքտարի՝ Հակոբ Բոյաձյանը: Մեծածախ վաճառքով զբաղվող օտարերկրյա վաճառականների կողքին կային նաև չորք-մարզպանցիներ, որոնցից էին Միհրան Մաճառյանը, Թորոս Գյոքչյանը և Հավաճա Ճըրճիսը²¹: Հայ-հունական մեկ այլ համագործակցություն էր «Եփրեմեան» աշխատանոց-գործարանը, որտեղ մոտ 1.000 բանվոր և բանվորուհի էր աշխատում²²:

Եափուձյանը նշում է, որ Չորք-Մարզպանում կար 12 «մաղազա»՝ (խանութ) մթերանոց-աշխատանոցներ՝ Նիգուլա Խուրիի, Պեշարայի, Հաճը Հակոբ Քյուչուք Սարգիսյանի, Մեմերձյան Հակոբի, Բոյաձյան Հակոբի, Եափուձյան Սագոյի, Եփրեմյան Կարապետի, Գարաեաղուայյան Հակոբի, Նաճարյան Իսկենտերի, Մաճառյան Գևոյի, իսկ Էոզերլի գյուղում Նամի Լուգայի և Հաճը Գևորգ Փեյթեքյանի²³ «մաղազաները»²⁴: Երկու հուշագրություններում ոչ միայն գրեթե նույնությամբ են

²⁰ ՀՅԹԻ, Եափուձեան Գ., նշվ աշխ., էջ 183:

²¹ Սահակյան Վ., Տեօթեօլ-Արիեստներ,

<https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/adanavilayet/dortyol/economy/dortyoltrades.html>, (հասանելի է):

²² Խապրիկ Մ., նշվ. աշխ., էջ 22:

²³ Մինաս Խապրիկը ևս նշում է Փեյթեքյան ընտանիքի մասին, որը ոչ միայն Էոզերլի գյուղի մեծահարուստ զերդաստանն էր, այլև ընդարձակ հողեր ուներ Նաջարը գյուղում: Մ. Խապրիկ, նշվ., աշխ., էջ 46:

²⁴ ՀՅԹԻ, Եափուձեան Գ., նշվ աշխ., էջ 184:

ներկայացված աշխատանքային գործընթացի նկարագրությունը, այլև համընկնում են նաև որոշ տնտեսվարողների անունները:

Օջաբըր գյուղում նշանավոր էին Գյոքչյան եղբայրները, որոնք հիմնել էին մոտ 700 աշխատող ունեցող նարնջի վաճառատունը: Գյոքչյանների հիմնական մրցակիցներն էին Բոյաճյանները՝ իրենց քարաշեն վաճառատնով. «Նարինջի եղանակին այս գործարանն ալ նուիրուած կ'ըլլար մրջնային աշխատանքներու, հարիրաւոր աշխատաւորներ եւ աշխատաւորուհիներ հոն կարող էին շահիլ իրենց օրապահիկը ոչ-ծանր գործերով»²⁵:

Ուշագրավ է նաև 1909 թ. Ադանայի Հայոց թեմի առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսի հանձնարարականը, որով հորդորվում էր տեղացիներին աջակցել Համբարձում Ռուբենյանին, որը պետք է նպաստեր նարնջի արտահանման գործին՝ նոր շուկաներ գտնելով և բարձրացնելով հայկական կողմի մրցունակությունը՝ ի հաշիվ գյուղումնիացի հույների ու Սիրիայի քրիստոնյա արաբների²⁶:

Վաճառքի աշխարհագրության և ծավալների մեծացումը բերում է նարնջի պարտեզների ընդարձակման՝ անգամ ի հաշիվ այլ մրգատեսակների: Պարտիզպաններն աշխատում էին նաև առավել որակյալ բերք ստանալու ուղղությամբ. «Վերջին տարիներին Տէօթ-Եօլի նարինջի համրանքը բարձրացաւ 180, 000 000 ի: Բնականաբար մրցում առաջանալով նաև վաճառականներու միջեւ, կ'սկսի աստիճանաբար բարձրանալ նարինջի գինը, այսպիսով, վերջին տարիներին, նարինջի հազար հատի գինը բարձրացաւ մէկ հնչուն ոսկիի»²⁷: Ըստ «Ժամանակ» թերթի

²⁵ Խապրիկ Մ., նշվ. աշխ., էջ 53:

²⁶ Մեարոպ Մաշտոցի անվան Մատենադարան (ՄՄ), Ադանայի Հայոց առաջնորդարանի արխիվ (ամշակ), Ադանայի Հայոց առաջնորդարանի նամակագրությունը (1908, 10 յունիս-1909, 28 մարտ), 1909 թ. 299:

²⁷ ՀՅԹԻ, Եսփունեան Գ., նշվ. աշխ., էջ 185:

տվյալների, 1912 թ. արտահանվել է 69 միլիոն նարինջ, իսկ 1913 թ. բերքն այդքան էլ առատ չի եղել՝ հազիվ 40-45 միլիոն²⁸:

Ս. Պոռանյանը նշում է, որ յուրաքանչյուր վաճառական ուներ բերքահավաքի հատուկ հինգ խումբ: Յուրաքանչյուր խմբի մեջ մտնում էին տասական աշխատող՝ նարինջի՝ մկրատով բերքահավաքի համար, հնգական նարինջ հավաքող, խմբի մեկ ղեկավար և մեկ ղեկավարուհի, մեկ հաշվապահ, երկուական փոխադրող, վեց բանվորուհի, մեկ արկղ պատրաստող: Մի խումբն ուներ 27 աշխատող, յուրաքանչյուր վաճառական ամեն օր աշխատեցնում էր հինգ խումբ, այսինքն՝ 135 աշխատող: Բացի այդ՝ բերքահավաքի շրջանում պահեստների մեջ աշխատում էին 40 բանվորուհի և չորս խմբի ղեկավարուհի, հինգ՝ նարինջ արկղերի մեջ դասավորող, 10 աստղձագործ, մեկ թվագրող, մեկ թուղթ տվող, մեկ թղթերը դասավորող, արկղերը նավահանգիստ տեղափոխող 10 ջորեպան և մեկ պահակ: Այս հաշվով մեկ վաճառականը աշխատեցնում էր 200-ից ավելի երկսեռ աշխատող, որոնց միջին օրավարձը հինգ ոսկի դահեկան էր: Բացի կիրակի օրերից՝ բերքահավաքի աշխատանքներն անդադար շարունակվում էին 100 օր: Նարնջենիների բարձրությունն ուներ համապատասխան բերքատվություն, միջին հաշվով ծառերը արտադրում էին 500 մինչև 15.000 նարինջ²⁹:

Ս. Գոճայանը ևս անդրադարձել է նարնջենիների բերքատվությանը՝ նշելով, որ 50-60 տարեկան ծառերը ունեցել են 18-20 մ բարձրություն և տարեկան տվել են 15-20.000 նարինջ: 10-15 տարեկան նարնջենին՝ 3-5.000 նարինջ, 10-12 տարեկան նարնջենին՝ 1.000-1.500, 7-8 տարեկան ծառը՝ 500-1.000 նարինջ: Բերքառատ տարիներին Չորք-Մարգպանը և շրջակա գյուղերն արտադրում էին

²⁸ Կիլիկեան արձագանք, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, թիւ 1607, 17-30 հոկտեմբեր, էջ 4:

²⁹ Պոռանեան Ս., նշվ. աշխ., էջ 52- 53:

120-150 միլիոն նարինջ³⁰: Հետաքրքրական է նաև, որ վաճառականները կարող էին հաշվել նարնջի քանակը դեռ ծառերի վրա, անգամ ծաղիկ վիճակում: Շատ նարինջներ վաճառվում էին դեռևս ամբողջությամբ չհասունացած³¹:

Նկարագրելով բերքահավաքի և վաճառքի աշխատանքները, Գևորգ Եսփունձյանը գրում է, որ բոլոր ծախսերը՝ քաղել, փոխադրել և այլն, կատարում էին հավաճաները՝ նարնջատերերը ոչ մի ծախս չունեին: Նարինջը քաղելու համար բարդի ծառից պատրաստվում էին 6-10 մ երկարությամբ շարժական սանդուղքներ: Օգտագործում էին հատուկ մկրատները, նարինջն առանց վնասելու քաղելու համար, ինչպես նաև հավաքելու համար ներսի կողմից մահուղապատված հատուկ կողովներ՝ «սերէթ», 25-30 նարնջի տարողությամբ, իսկ փոխադրելու համար՝ 300-400 նարնջի տարողությամբ՝ բոժոժաձև, կրկին մահուղապատ կողովներ: Յուրաքանչյուր «մաղազա» ուներ 4-6 աշխատախումբ, որը կոչվում էր «կուլ»: Յուրաքանչյուրում կար մեկ հսկիչ չավուշ, մեկ հաշվող՝ «սայրճը», 10-12 նարինջ քաղողներ՝ «մագասճը», ամեն երկու «մագասճրի» համար նախատեսված էր մեկ «սերէթի» և փոխադրողներ³²: Պարտեզներում տեսակավորված և փաթեթավորված նարինջները դասավորում էին արկղերի մեջ, ժամանակավոր գամում, տեղափոխում «մաղազա» վերամշակվելու համար. «Մէկ պարտեզի նարնջաքաղը վերջանալուն պես կուլը կը փոխադրուի ուրիշ պարտեզ, և այսպես շարունակուելով կը վերջանա նարնջաքաղը, սկսեալ Մեպտեմբերի 15 էն մինչեւ Յունվարի տասնը հինգը, չորս ամիս³³»:

³⁰ Գոճայեան Մ., Պատմութիւն Չորք-Մարգպանի (Տէօթթ-Եոյ) գիւղաքաղաք մը Կիլիկիոյ մէջ, Լոս-Անճելլոս, Լոս-Անճելլոսի Չորք-Մարգպանի հայրենակցական միութիւն, 2005, էջ 159:

³¹ Խապրիկ Մ., նշվ. աշխ., էջ 22:

³² ՀՅԹԻ, Եսփունձեան Գ., նշվ. աշխ., էջ 185-186:

³³ Նույն տեղում, էջ 188-189:

«Մաղազայի» աշխատանքը դեկավարում ու հսկում էր տերը: «Մաղազայում» աշխատում էին, հյուսներ՝ «նաճար», պարտեզից փոխադրված նարինջները դատարկողներ, ընտրող, տեսակավորող, փաթեթավորողներ, չավուշ կանայք, «մարգա» (ապրանքային նշան) խփողներ, թուղթ կտրողներ, արկղերը թղթապատողներ, նարինջներն արկղերի մեջ դասավորողներ, տեղափոխողներ և այլն: Հյուսներն իրենց աշխատանքը սկսում էին նախօրոք, այլապես անհրաժեշտ քանակության արկղեր չէր ապահովվի: Աշխատանքի եռուն շրջանում երբեմն աշխատում էին նաև գիշերները, որի համար ստանում էին կրկնակի աշխատավարձ: Արկղերը պատրաստվում էին հստակ չափերով՝ 64, 80, 100, 150 նարինջ տեղավորելու համար՝ կապված չափերից³⁴: Արկղերի չափերը մշտապես պահպանվում էին, նույնանման տվյալներ ներկայացնում է նաև Մ. Գոճայանը³⁵:

«Մաղազաներում» նարինջը կրկին տեսակավորվում էր ու փաթեթավորվում չավուշ կանանց վերահսկողությամբ: Այնուհետև նախապես դրոշմանշված կափարիչնեչով փակում էին արկղերը: Յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում բոլոր աշխատակիցներին տրվում էին «պիլեթներ». «աշխատավարձի արժողութեան համեմատ, տարբեր գույներով և տարբեր մեծութեամբ զանազանուած, ընկերութեան կնիքով կնքուած քարթոնե կտրոններ»: Աշխատակիցները, տվյալ կտրոններ շաբաթվա վերջին ներկայացնելով, ստանում էին գումարը³⁶:

Ժամանակի մամուլը, անդրադառնալով Չորք-Մարզպանի նարնջագործությանը, հաղորդում էր, ընդհանուր ոգևորության մասին. «Մինչև երեկոյ անընդհատ նարինջ կը կրուի պարտեզներէն դէպի մթերանոցները, ուր հարիւրաւոր կիներ ու

³⁴ Նույն տեղում, էջ 189-190:

³⁵ Գոճայեան Մ., նշվ. աշխ., էջ 159-160:

³⁶ ՀՅԹԻ, Եափունեան Գ., նշվ. աշխ., էջ 191-193:

աղջիկներ կը գբաղին զանոնք զատելով, ծրարելով և սնտուկներու մէջ տեղաւորելով, մինչ այրեր ալ, սնտուկները առաքումի պատրաստ վիճակի մէջ դնելու կ'աշխատին»³⁷:

Նարնջի վաճառքը իրականացվում էր ներքին և արտաքին շուկաներում: Ներքին վաճառքի կենտրոնը Կ. Պոլիսն էր: Այնտեղ ուղարկված արկղերի վրա փակցվում էր «Թեճարեթի տախիլիյէ» ներքին վաճառականութիւն իմաստով՝ թղթադրոշմ: Արտաքին վաճառքի կենտրոնը Օդեսա նավահանգիստն էր, քանի որ Չորք-Մարգպանի նարինջը վաճառվում էր Ռուսաստանում³⁸:

Արտահանվող նարինջները տեղափոխում էին Ճին Գուլա (Ճինկուլա) ծովախորշը: Վաճառականները նախապես պայմանավորվում էին նավային ընկերությունների հետ, որոնք հեռագրով տեղեկացնում էին իրենց՝ մոտենալու մասին³⁹: Այնուհետև արկղերը տեղափոխվում էին նավերի վրա և ուղևորվում Զմյոռնիա, Կ. Պոլիս և Օդեսա⁴⁰: Մ. Գոճայանը գրում է, որ սկզբնական շրջանում նարինջը արտահանվում էր Ադանա, Մարաշ և Հալեպ, իսկ համիդյան ջարդերին հաջորդող տարիներին՝ եվրոպական շուկաներ⁴¹:

Չորք-Մարգպանի նարնջի առանցքային կարևորության մասին փաստում է նաև 1921 թ. դեկտեմբերի 22-ի Կ. Պոլսի Համազգային խորհրդի⁴² նիստում տեղի ունեցած քննարկումը, երբ ժողովի անդամները Ազգային պատվիրակության ուշադրության

³⁷ Կիլիկեան արձագանք, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, թիւ. 1651, Դեկտեմբեր 5-18, էջ 1:

³⁸ ՀՅԹԻ, Եպիսոպոս Գ., նշվ աշխ., էջ 193-194:

³⁹ Նույն տեղում, էջ 194-195:

⁴⁰ Խապրիկ Մ., նշվ աշխ., էջ 23:

⁴¹ Գոճայեան Մ., նշվ աշխ., էջ 159:

⁴² Համազգային մարմինը կազմված էր երեք հարանվանությունների հոգևոր առաջնորդներից և իրենց իրավասու մարմինների կողմից նշանակված չորս հայ-առաքելական, երկու հայ-կաթոլիկ, երկու հայ-ավետարանական անդամներից: Համազգայինի Ա. նիստը տեղի է ունեցել 1919 թ. մարտի 8-ին: Ժողովի առաջին որոշումն է եղել այս մարմինը կոչել Համազգային խորհուրդ: Չավէն Արքեպս., Պատրիարքական Յուշերս, վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, տպ. «Նոր Աստղ», 1947, էջ 299-300:

են ներկայացնում հարցը և խնդրում, որ դիմի ֆրանսիական կառավարությանը՝ հազարավոր ոսկիների արժողությամբ Չորք-Մարգպանի նարնջի բերքը փրկելու համար: Առաջարկում են, որ ֆրանսիացիներից կազմված հանձնաժողովի հսկողությամբ այն քաղվի և արդյունքը հատկացվի կիլիկյան գաղթականներին⁴³:

Ավելի ուշ՝ 1928 թ., «Արեւ» թերթում կարդում ենք, որ համաձայն վերջին թուրք-ռուսական առևտրական պայմանագրի Չորք-Մարգպանի նարնջի բերքը ամբողջությամբ Ռուսաստան է արտահանվելու: Նշվում է նաև, որ բազմաթիվ տեղացի թուրքեր, որ նախկինում «անօթի, մուրացիկ» էին, հայերի փշրանքներով էին կերակրվում, այժմ. «մեծագումար հարստություններ դիզած և դիրքերու տիրացած են»: Տվյալ տարում յուրաքանչյուր հազար նարինջը արժեցել է 60 թրք. թղթադրամ, այսինքն՝ 8 օսմ. ոսկի: Ըստ թերթի տվյալների, այդ տարում Չորք-Մարգպանի նարնջի հասույթը մոտավորապես 40.000 օսմ. ոսկի է կազմել: Նախքան Առաջին աշխարհամարտը. «Չի կար ընտանիք մը Տեօրթ Եօլի մէջ որ տարեկան առնուազն 50.000 նարինջի բերք չունենար, իսկ շատեր ալ տարեկան կէս միլիոնէ աւելի կ'ունենային: Այժմ այդ բոլորը դահիճներու ձեռքը մնացած են... Մտածել որ երէկուան պնակալէզները և ծառաները այսօր կը բազմին փառաւոր տուններու մէջ, մինչ անդին տէրը իր հողին կարօտը կը քաշէ»⁴⁴:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին մրցակցային բարդ և անհավասար պայմաններում հայերը կարողացել էին հասնել մեծ ձեռքբերումների: Ադանայի նահանգում արտահանման և ներմուծուման շուկայի, ժամանակի համար արդիական տեխնիկայով զինված գործարանների, վաճառատների ու տարբեր ընկերությունների զգալի մասը պատկանում էր հայերին: Հայերը

⁴³ Երուսաղեմի Հայոց պատրիարքարան, Հայկական Հարցի և Հայոց ցեղասպանության արխիվ (ԵՀՊ ՀՀՅՅԱ), տուփ 1, թղթապանակ M 111, վավերագիր Հ^Պ թ 682աբ:

⁴⁴ Աւերակ Տեօրթ Եօլ, «Արեւ», Գահիրէ, 1928, թիւ 2763, 12 Մարտ, էջ 1-2:

տիրապետում էին գրեթե բոլոր արհեստներին, ունեին առաջնային տեխնիկայով հագեցած գյուղատնտեսություն: Ընդհանուր զարգացման համատեքստում գյուղատնտեսության որոշ ճյուղեր հասել էին լուրջ հաջողությունների, որոնց թվում հատկանշական էր նարնջագործությունը: Չորք-Մարզպանի նարնջագործության առաջնթացն աստիճանաբար իր շուրջն է կենտրոնացնում ինչպես տարբեր շրջանների հողագործներին, արհեստավորներին, այնպես էլ հայ և օտար վաճառականներին: Չորք-Մարզպանը նարնջի արտադրության ու ապրանքաշրջանառության ծավալներով դառնում է նահանգում երկրորդը՝ Ադանայի բամբակագործությունից հետո:

Հայկական կապիտալի աճը չէր կարող վրիպել թուրքական իշխանությունների ուշադրությունից: Օսմանյան կայսրության տնտեսությունը միատարր դարձնելու և թուրքացնելու ծրագիրը աստիճանաբար դառնում է պետական քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը: Հայոց ցեղասպանության տարիներին, իշխանությունը կողոպտելով և բռնագրավելով հայերի կապիտալը, ոչ միայն ձեռք է բերում հսկայական հարստություն, այլև շարունակում է օգտվել հայերի կատարած ներդրումներից. Չորք-Մարզպանի հայերի պարտեզներն ու առևտրական կապերը, նույնպես, ծառայեցին դրանք զավթած հանցագործներին:

ABOUT THE PECULIARITIES OF ECONOMIC LIFE IN THE CHORK-MARZPAN SUB-DISTRICT,

ADANA PROVINCE

Ani Voskanyan

(Summary)

In the late 19th and early 20th centuries, the Armenians of Adana Province boasted remarkable economic success, having reached great achievements despite the complicated and unequal competitive conditions.

A considerable part of the exports and imports of the province was in their hands, and the owners of most of the local commercial houses, companies and factories with cutting-edge machinery were Armenians. Almost all the crafts were practised by the Armenians who could also boast the use of advanced technologies in certain branches of agriculture, particularly, orange cultivation. Orange consumption was gradually growing in scope, making this fruit one of the top products in the trade turnover of the province.

Increase in orange cultivation gradually made Chork-Marzpan a major centre where farmers and craftsmen from the neighbouring villages and towns as well as Armenian and foreign merchants gathered. In the course of time, Chork-Marzpan became the second largest centre in the province after Adana, which was renowned for cotton farming.

Indeed, the growth of the Armenian capital could not remain unnoticed by the authorities of the country. Gradually, the plan of Turkifying the economy of the Ottoman Empire became one of the main components of the state policy of that country. In the years of the Armenian Genocide, the Turkish authorities extensively plundered and confiscated Armenian property, gaining a huge fortune in this way; moreover, they enjoyed income from many Armenian investments in subsequent years as well. In Chork-Marzpan, for instance, the gardens formerly cultivated by the Armenians as well as the commercial ties of the local merchants who had been either killed or deported became sources of income for the criminals who had appropriated them.

ОБ ЭКОНОМИЧЕСКИХ ОСОБЕННОСТЯХ ВОЛОСТИ ЧОРК-МАРЗПАН ПРОВИНЦИИ АДАНА

Ани Восканян

(Резюме)

Армяне имели существенные экономические успехи в конце XIX — начале XX века в провинции (вилайте) Адана. Они сумели достичь больших успехов в условиях сложной и неравной конкуренции. Армянам принадлежала значительная часть экспортного и импортного рынка, заводов, оснащенных современной по меркам своего времени техникой, лавок и различных компаний. Они владели почти всеми

видами ремесел, использовали передовую технику в сельском хозяйстве. В контексте общего развития армяне достигли серьезных результатов в некоторых отраслях сельского хозяйства, включая производство апельсина. Последний стал одним из основных товаров в товарообороте провинции, постепенно расширяя круг потребителей.

Развитие производства апельсина в волости (казе) Чорк-Марзпан постепенно привело к притоку как торговцев, земледельцев, ремесленников из соседних сел и поселков, так и армянских и иностранных купцов. По объемам производства апельсина и товарооборота Чорк-Марзпан стал вторым в провинции после Аданы – лидера хлопководства.

Рост армянского капитала не ускользнул от внимания руководящих кругов страны. Программа по туркизации и превращению османской экономики в однородный сектор постепенно стала одним из основных компонентов государственной политики. В годы геноцида армян власти грабили и конфисковали армянский капитал и таким образом приобрели не только колоссальные богатства: многие инвестиции армян продолжали приносить доход и в последующие годы. Не был исключением и Чорк-Марзпан, где возделанными армянами садами и торговыми связями постоянно пользовались захватившие их преступники.